

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՔՈԼԵՋԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ և
ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2019

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կրթահամալիր) քոլեջի տեխնիկական առարկաների ամբիոնը (այսուհետ՝ Ամբիոն) իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով, Կրթահամալիրի կանոնադրությամբ, ինչպես նաև Համալսարանի կառավարման մարմինների իրավասության շրջանակներում ընդունված և համապատասխան այլ իրավական ակտերով: >
2. Սույն կանոնադրությամբ կարգավորվում է Ամբիոնի կողմից իրականացվող կրթական, ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական և կրթահամալիրի ծառայողակիրառական մարզաձևերի սպորտային միջոցառումների գործունեությունը:
3. Ամբիոնը Կրթահամալիրի քոլեջի կառուցվածքային ստորաբաժանում է: Ամբիոնը սովորողների հետ կազմակերպում է կրթական,

մեթոդական, դաստիարակչական աշխատանքներ, իրականացնում ուսումնասիրական գործնթացում նյութատեխնիկական միջոցների ռացիոնալ օգտարործումը:

4. Ամբիոնը ապահովում է ֆիզիկական կուլտուրա, ֆիզիկական պատրաստականության, կրակային պատրաստականության, հատուկ տակտիկական պատրաստականության, առաջին բուժօգնության ուղղություններով համապատասխան առարկաների դասավանդումը, սովորողների աշխատանքների ու պրակտիկայի ղեկավարումը, ինչպես նաև գիտելիքների ստուգման անցկացումը:
5. Ամբիոնի գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում են Կրթահամալիրի պետը, նրա տեղակալները, քոլեջի պետը, նրա տեղակալը և ֆակուլտետի պետը՝ իրենց իրավասության շրջանակներում:
6. Ամբիոնի կանոնադրությունը ընդունվում, փոփոխվում կամ լրացվում է Կրթահամալիրի գիտական խորհրդի որոշմամբ:
7. Ամբիոնն ունի իր անվանումը, պաշտոնաթուղթ (բլանկ), ինչպես նաև կարող է ունենալ խորհրդանիշ:

ԱՄԲԻՈՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Ամբիոնի հիմնական խնդիրներն են՝

- 1.1 իրականացնել կրթական, ուսումնադաստիարակչական, և կրթահամալիրի ծառայողակիրառական մարզաձևերի սպորտային միջոցառումների գործունեությունը: անցկացնել ամբիոնի գործունեության ուղղվածությանը համապատասխան միջոցառումներ և ուսումնասիրություններ.
- 1.2 բարձրացնել ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքների որակը.
- 1.3 ապահովել ամբիոնում իրականացվող գիտահետազոտական, ուսումնադաստիարակչական և նորարարական գործընթացների միասնականությունը.
- 1.4 ընդլայնել միջազգային համագործակցությունը ամբիոնի գիտահետազոտական գերակա ուղղություններին համապատասխան.
- 1.5 ընդլայնել և կրթական գործընթացի մասնակիցների համար հասանելի դարձնել ուսումնական ռեսուրսները
- 1.6 ամբիոնում ստեղծել ուսումնամեթոդական նյութերի դասընթացների էլեկտրոնային բազա դասախոսների և սովորողների համար.
- 1.7 մասնակցել կրթահամալիրում իրականացվող գիտական ծրագրերին.
- 1.8 գիտական ամսագրերի և այլ միջոցներով հասարակությանը ծանոթացնել ամբիոնի կրթագիտական ձեռքբերումներին.
- 1.9 մշակել հաստատված կրթական չավորոշիչներին համապատասխանող ուսումնական ծրագրեր և մեթոդներ.
- 1.10 նպաստել Կրթահամալիրի կողմից իրականացվող քաղաքականության իրականացմանը:

2. Ամբիոնի հիմնական գործառույթներն են՝

- 2.1 անցկացնել ուսումնական պարապմունքներ առարկայական ծրագրերին համապատասխան, ղեկավարել սովորողների պրակտիկան.

- 2.2 մշակել առարկայական ծրագրեր՝ համապատասխան ուղղվածության զարգացման նպատակով.
- 2.3 սահմանված կարգով տրամադրել ամբիոնի կարծիքը.
- 2.4 համագործակցել Կրթահամալիրի գրադարանի հետ՝ սովորողներին անհրաժեշտ գրականության ապահովման նպատակով.
- 2.5 մշակել և/կամ երաշխավորել ամբիոնի ուղղվածության դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ և գիտաուսումնական այլ անհրաժեշտ նյութեր, ինչպես նաև տրամադրել այլ ամբիոնների աջակցությամբ կազմված դասագրքերի, ուղեցույցների և գիտաուսումնական այլ անհրաժեշտ նյութերի վերաբերյալ կարծիք.
- 2.6 ապահովել ուսումնական գործընթացի անցկացումը ժամանակակից տեխնիկական միջոցներով.
- 2.7 ապահովել ամբիոնի անձնակազմի մասնակցությունը ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը վերաբերող միջոցառումներին.
- 2.8 իրականացնել վերահսկողական դասալսումներ և դրանց քննարկումներ.
- 2.9 իրականացնել ծրագրային աշխատանքներ պրոֆեսորադասախոսական կազմի գիտական ներուժի, մասնագիտական հետաքրքրությունների, գիտատեսական և գիտագործնական կարողությունների զարգացման, ընդհանուր դաստիարակչական աշխատանքների կառավարման կատարելագործման և զարգացման ուղղությամբ.
- 2.10 ամբիոնում քննարկել կրթության որակին վերաբերող հարցեր և իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ.
- 2.11 ուսումնասիրել և տարածել ամբիոնի դասախոսների առաջավոր մասնագիտական փորձը.
- 2.12 ամբիոնի գիտահետազոտական աշխատանքների շրջանակը ընդլայնելու նպատակով իրականացնել գիտահետազոտական համատեղ կոնֆերանսներ, գիտագործնական սեմինարներ.
- 2.13 պլանավորել և իրականացնել անհրաժեշտ այլ միջոցառումներ ամբիոնի առջև դրված խնդիրների իրականացման համար:

ԱՄԲԻՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

1. Ամբիոնը ղեկավարում է ամբիոնի պետը, որն նշանակվում է ՀՀ ոստիկանության պետի հրամանով: Ամբիոնի գիտամանկավարժական կազմը բաղկացած է ավագ դասախոսից, դասախոսից: Կրթահամալիրի ամբիոններում պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատողների աշխատանքի ընդունումը և աշխատանքային հարաբերություններն իրականացվում են «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի համապատասխան:
2. Ամբիոնի գործունեության համար պատասխանատու է ամբիոնի պետը: Ամբիոնի պետը կազմակերպում և ղեկավարում է ամբիոնի կրթական, գիտական և այլ աշխատանքները, ներկայացնում է նրա կոլեկտիվը Կրթահամալիրի այլ ստորաբաժանումների հետ հարաբերություններում:

3. Ամբիոնի պետը՝

- 3.1 պլանավորում, կազմակերպում և անցկացնում է ուսումնական, գիտահետազոտական, դաստիարակչական աշխատանքները ամբիոնում: Կազմում է ամբիոնի գործունեության հաշվետվությունը
- 3.2 ղեկավարում է ամբիոնի անձնակազմի ուսումնական, մանկավարժական, ծառայողական և գիտական մակարդակի բարձրացման աշխատանքները
- 3.3 ապահովում է ամբիոնի անձնակազմի կատարողական կարգապահությունը
- 3.4 հսկողություն է սահմանում ուսումնական գործընթացում նյութատեխնիկական միջոցների օգտագործման վրա
- 3.5 ուսումնասիրում և հաստատում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի անհատական աշխատանքային պլանները
- 3.6 հսկում է ամբիոնի պլանների կատարման գործընթացը, քննարկում ամբիոնի դասախոսական կազմի կողմից անձնական պլանների կատարման ընթացքը
- 3.7 ուսումնական տարվա արդյունքներով կազմում և ուսումնական բաժին է ներկայացնում ամբիոնի կատարած աշխատանքների հաշվետվությունը
- 3.8 մասնակցում է կրթահամալիրի գիտական խորհրդի նիստերին
- 3.9 առանձին հանձնարարություններ է տալիս ամբիոնի անձնակազմին ուսումնական, մեթոդական, գիտահետազոտական, դաստիարակչական հարցերով:
- 3.10 հսկողություն է սահմանում թեմատիկ պլանների, ծրագրերի նախապատրաստման նկատմամբ
- 3.11 բաշխում է ուսումնական բեռնվածությունը դասախոսների միջև, հսկում պարապմունքների անցկացման ընթացքը, քննարկում ամբիոնում դասավանդվող առարկաներից սովորողների առաջադիմությունը
- 3.12 անմիջականորեն մասնակցում է ուսումնական գործընթացին, ընդունում ստուգարքներ և քննություններ, կատարում ուսումնամեթոդական աշխատանքներ
- 3.13 կատարում է դասալսումներ, այցելուների արդյունքների քննարկումը՝ տեղ գտած թերությունները վերացնելու համար
- 3.14 հսկողություն է իրականացնում առարկաների դասավանդման որակի և ուսուցման գործընթացում ուսուցանողական մարմինների առաջավոր փորձի և ուսուցման տեխնիկական միջոցների ներդրման վրա
- 3.15 ներկայացնում է հաստատման կրթահամալիրի պետին ծառայողակիրառական սպորտային միջոցառումների տարեկան օրացուցային պլանը
- 3.16 ներկայացնում է հաստատման կրթահամալիրի պետին մշտական անձնակազմի ֆիզ. պատրաստականության թեմատիկ պլանները և դասացուցակները.
- 3.17 առնվազն ամիսը մեկ անգամ կազմակերպում և անցկացնում է ամբիոնի նիստ: Ամբիոնի նիստերում քվեարկվող հարցերի վերաբերյալ ձայնի իրավունք ունեն միայն պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները: Ամբիոնի ուսումնաօժանդակ կազմի աշխատողները և հրավիրված անձինք նիստերին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով: Ամբիոնի նիստը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցում է անդամների կեսից ավելին:
- 3.18 ամբիոնի հաստիքացուցակը հաստատվում և փոփոխվում է ՀՀ ուսուցանողական պետի հրամանով:

ԱՄԲԻՈՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ամբիոնն իր գործունեության ընթացքում համագործակցում է՝

1. կրթահամալիրի համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ միջոցառումների (կոնֆերանսների, ժողովների, խորհրդակցությունների կամ այլ ձևաչափերով իրականացվող այլ միջոցառումների) կամ ուսումնական գործընթացի կազմակերպման, այդ թվում՝ նաև դասացուցակների համապատասխանեցման նպատակով.
2. ամբիոնը ներկայացնում է համապատասխան ստորաբաժանումներին ամբիոնի գործունեության հաշվետվություն և ծրագրեր՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա կտրվածքով, ծառայողական և ուսումնական գործընթացի կազմակերպման հարցերով գրություններ աշխատողներին խրախուսելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու և այլն).
3. այլ բուհերի համապատասխան ամբիոնների հետ՝ համատեղ ծրագրերի իրականացման և այլ նպատակներով՝ Կրթահամալիրի կանոնադրության, կառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա:

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ամբիոնի աշխատողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով, Կրթահամալիրի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և այլ իրավական ակտերով: